տակը գրուած է. „Ն. Վ. Գոգոլ, 1808—1842“։ Արձանի բարձրութիւնն է 4 արշին 2 բերշոկ։ Արձանը քաղաքին արժեցել է 40000 ր.։

Հանդիսաւոր բացումից յետոյ քաղաքագլխի պաշտօնակատարը և մի երկու այլ անձինք ճառերով դրուատեցին տաղանդաւոր հեղինակի գրական գործունէութիւնը։

Ուրախալի երևոյթ է, որ տաղանդաւոր գրական գործիչները եթէ իրենց կենդանութեան ժամանակ չեն գնահատւում, գոնէ յաջորդ սերունդները երախտագիտութեամբ են վերաբերւում նոցա յիշատակին։

ՀԱՅԱԶԳԻ ՆԱՐԻՄԱՆ ԽԱՆ

Բազմատեսակ խօսակցութեան առարկայ է դարձել Վիէննայի պարսից դեսպան հայազգի Նարիման-խանի անախորժ դէպքը. Նարիման-խանը մեծ սէր ու համակրութիւն է վայելում թէ շահի և թէ մեծ վեզիրի կողմից։ Մի քանի տարի սրանից առաջ, երբ այժմեան մեծ վեզիրը աքսորուած էր Կում, այն ժամանակուայ մեծ վեզիր Ամին-Դօվլէն, որ այժմ աքսորուած է Ռէշտ, Աւստրիայից կանչեց բարօն Կոլիշէրին, որ կարդի բերէ պարսկական ֆինանսները։ Վերջինն առանց ոչինչ չինելու՝ խանի տիտղոս ստացաւ, դարձաւ պարսից գեներալ, վերադարձաւ Վիէննա և իբրև Պարսից կառավարութեան ներկայացուցիչ՝ սկսեց զանազան ակցիոներական ընկերութիւններ կազմակերպել։ Սակայն Շահի ներկայացուցիչը Վիէննայում, Նարիման խանը, պաշտօնապէս հաղորդեց Աւստրիական կառավարութեանը և հրատարակեց լրագիրներում, որ բարօն Կոլիշէրը պարսից կառավարութեան լիազօրը չէ. այս յայտարարութեան շնորհիւ Կոլիշէրի ձեռնարկած ընկերութիւնները գլուխ չեկան։ Բարօնը Նարիման-խանից վրէժխնդիր լինելու համար երկու լրագիր է հիմնում և արշաւանք սկսում նրա դէմ՝ ամեն տեսակ զրպարտութիւններ և մեղադրանքներ բարդելով նրա վրայ. այս մեղադրանքներն ազդեցութիւն են ունենում և Աւստրիական պարլամենտում հարցապնդումներ են լինում. արտաքին գործոց նախարար Գոլուխովսկին հերքում է այդ բոլորը և մեղադրանքներն անհիմն անուանում։ Բայց այնուամենայնիւ բարօն Կոլիշէրի լրագիրների յարձակումներն այնպիսի աղմուկ բարձրացրին Վիէննայի արիստոկրատների շրջաններում, որ Նարիման-խանը ստիպուած եղաւ հրաժարուել իւր պաշտօնից և շահն էլ ընդունեց հրաժարականը։

Այսպիսով արկածախնդիր Բարօնի շնորհիւ պաշտօնից հեռացաւ 40 տարի քաղաքագիտական ասպարիզում գործող, շահի և մեծ վէզիրի սիրելի Նարիման Խանը։ Խօսք կայ, որ պաշտօնաթող հայազգի դեսպանին շահը նշանաւոր վարչական պաշտօն պէտք է յանձնէ։